https://doi.org/10.46991/hc.2023.20.2.048

The Mkhitaryan Congregants on the Croatian National Struggle in 1848-1849

Feliks Movsisyan
https://orcid.org/0000-0001-7576-9672
Phd, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after H.Tumanyan
felmov@mail.ru

Keywords: Austrian Empire, Croatia, illirism, national struggle, autonomy, Jelacic, ”Europe”, ‘’Bazmavep”.

The revolutionary and national-liberation movements that broke out in the Austrian Empire found a wide response in the Armenian public mind of the time and in the periodical press. The members of the Mkhitaryan Congregation in Venice and Vienna, as well as ‘’Europe” and ‘’Bazmavep” periodicals, touched upon those movements and the national struggle of the Croats.

Historian Ghukas Inchichyan from the Mhitaryan Congregation in Venice, noticed that the Croats didn’t have an independent kingdom and were under foreign rule because of their disunity and cleavage. In his opinion, despite the fact that the Croats were brave, courageous people and good soldiers, they were revengeful and rancorous inside, which prevented them from coming together, uniting and struggling for independence.

Commenting on the temporary liberation of the Venetians from the Austrian rule, the editor of ‘’Bazmavep”, Gabriel Archimandrite Aivazovsky noted with regret that their enjoyment was short-lived, for the Croatian soldiers mercilessly suppressed their movement and shed-blood.

The Mhitaryan congregants Ambrosios Archimandrite Galfayan and Grigor Archimandrite Govrikyan impartially and briefly presented the national movement of the Croats. The political weekly ‘’Europe” of the Vienna Mkhitaryans and Ghevond Archimandrite Hovnanyan elucidated that event more thoroughly. The editors of ‘’Europe” were obliged to present the political events in an impartial manner, to be faithful to the reliability of the received news. While generally mentioning that position in relation to the political events taking place in Europe, the Mkhitaryans in Vienna didn’t show the same approach when elucidating the struggle of the subject peoples of the Austrian Empire. They didn’t encourage the liberation struggle of the Hungarians against the Empire, but perceived the fact that the Croats’ struggle was entirely against the Hungarian government. According to the Mkhitaryans, the Croats, who stood up for their national autonomy, were loyal subjects of the Empire, were satisfied and happy with the constitution adopted by Frantz Joseph and thus ready to die for the Emperor.

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 48-66.
Received: 09.07.2023
Revised: 12.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Մխիթարյան միաբանները 1848-1849թթ. խորվաթական ազգային պայքարի մասին

Ֆելիքս Մովսիսյան
պ.գ.դ., պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ

Հիմնաբառեր՝ Ավստրիական կայսրություն, Խորվաթիա, իլլիրիզմ, ազգային պայքար, ինքնավարություն, Ելաչիչ, «Եվրոպա», «Բազմավեպ»:

1848-1849թթ. Ավստրիական կայսրությունում բռնկված հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները լայն արձագանք գտավ ժամանակի հայ հասարակական մտքում և պարբերական մամուլում: Այդ շարժումներին, այդ թվում՝ խորվաթների ազգային պայքարին անդրադարձան Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներն ու նրանց խմբագրած «Եվրոպա» և «Բազմավեպ» պարբերականները:

Վենետիկի Մխիթարյաններից պատմաբան Ղուկաս Ինճիճյանը խորվաթների ինքնուրույն թագավորություն չունենալու և օտարի տիրապետության տակ գտնվելու իրողությունը բացատրում է նրանց անմիաբանությամբ և երկպառակությամբ: Նրա կարծիքով խորվաթները, թեպետ, քաջ, համարձակ մարդիկ են ու լավ զինվորներ, բայց իրենց ներսում ոխակալ ու վրեժխնդիր են, որը նրանց խանգարում է համախբել, միավորել և պայքարել անկախության համար:

«Բազմավեպի» խմբագիր Գաբրիել վարդապետ Այվազովսկին անդրադառնալով ավստրիական տիրապետությունից վենետիկցիների ժամանակավոր ազատագրմանը՝ ցավով նշում է, որ նրանց ուրախությունն ու ցնծությունը կարճ տևեց: Խորվաթ զինվորները անգթորեն ճնշեցին նրանց ելույթը և շատ արյուն հեղեցին:

Մխիթարյան միաբաններ Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը և Գրիգոր վարդապետ Գովրիկյանը, հիմնականում անկողմնակալ դիրքերից, համառոտ ներկայացնում են խորվաթների ազգային շարժումը: Դրան առավել հանգամանորեն անդրադառնում են Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթը և Ղևոնդ վարդապետ Հովնանյանը: «Եվրոպայի» խմբագիրները պարտավորություն էին ստանձնել քաղաքական իրադարձությունները ներկայացնել անաչառ և անկողմնակալ, հավատարիմ մնալ ստացված լուրերի հավաստիությանը: Ընդհանուր առմամբ պահպանելով այս ուղեգիծը՝ Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների նկատմամբ, Վիեննայի Մխիթարյանները նույն մոտեցումը չեն դրսևորում Ավստրիական կայսրության հպատակ ժողովուրդների պայքարը լուսաբանելիս: Նրանք չեն խրախուսում կայսրության դեմ հունգարացիների ազատագրական պայքարը: Մխիթարյանները ճիշտ են ընկալում, որ խորվաթների պայքարն ուղղված է հունգարական կառավարության դեմ: Նրանք ազգային ինքնավարության համար ոտքի ելած խորվաթներին անվանում են կայսրության հավատարիմ հպատակներ, ովքեր բավարարված ու երջանիկ են Ֆրանց Իոսիֆի շնորհած սահմանադրությունից ու պատրաստ են մեռնելու կայսեր համար:

The Mkhitaryan Congregants on the Croatian National Struggle in 1848-1849
Մխիթարյան միաբանները 1848-1849թթ. խորվաթական ազգային պայքարի մասին
Конгрегация Мхитаристов о хорватской национальной борьбе 1848-1849 гг.

Феликс Мовсисян

доктор исторических наук, профессор, заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета имени Ов. Туманяна

Ключевые слова: Австрийская империя, Хорватия, иллиризм, национальная борьба, автономия, Елачич, «Европа», «Базмавеп».

Вспыхнувшие в 1848-1849 гг. в Австрийской империи революционные и национально-освободительные движения нашли широкий отклик в армянском общественном сознании и в армянской периодической печати того времени. К этим движениям, в том числе к национальной борьбе хорватов, обращались члены венской и венецианской Конгрегации Мхитаристов и издаваемые ими периодические издания «Европа» и «Базмавеп».

Историк Гукас Инчичян, один из представителей венецианских Мхитаристов, объясняет факт того, что хорваты не имеют независимого королевства и находятся под иностранным правлением, их разобщенностью и раздробленностью. По его мнению, несмотря на то, что хорваты храбрые, отважные люди и отличные воины, внутри они мстительные и злопамятные, что мешает им договориться, объединиться и бороться за независимость.

Говоря о временном освобождении венецианцев от австрийского владычества, редактор «Базмавепа» Архимандрит Габриэл Айвазовский с сожалением отмечает, что их радость и счастье были недолгими. Хорватские солдаты безжалостно подавали их выступление и пролили много крови. Представители Конгрегации Мхитаристов Амбросиос Галфаян и Григор Говрикян с беспристрастной позиции кратко представляли национальное движение хорватов. Более подробно об этом рассказывают политический еженедельник венских Мхитаристов «Европа» и Архимандрит Гевонд Овнанян. Редакция «Европы» взяла на себя обязательство освещать политические события беспристрастно и непредвзято, соблюдать достоверность получаемых новостей. Сохраняя в целом эту тенденцию по отношению к политическим событиям, происходящим в Европе, венские Мхитаристы не проявляли такого же подхода при освещении борьбы подвластных народов Австрийской империи. Они не поощряли освободительную борьбу венгров против империи. Мхитаристы правильно понимали, что борьба хорватов направлена против венгерского правительства. Хорватов, отстаивавших национальную автономию, они называли верноподданными империи, которые довольны и счастливы дарованной Францем Иосифом конституцией и готовы умереть за императора.

* * *

Ներածություն: 1830-1840-ական թթ. Ավստրիական կայսրության մեջ մտնող Խորվաթիայում ծավալվեց անունով հասարակական-քաղաքական և մշակութային շարժում, որի նպատակը «Մեծ Իլլիրիա» ստեղծելն էր: Իլլիրիզմի հասարակական-քաղաքական գործիչները շարժման մեջ

տեսնում էին ոչ միայն խորվաթական ազգի գոյատևման, տնտեսական և քաղաքական զարգացման երաշխիքը, այլև լուրջ հակակշիռ՝ հունգարական ազգայնամոլական դրսևորումների դեմ [Дьяконов и др., 1980, 196-198):

1848 թ. մարտին Վիեննայում բռնկված հեղափոխության ազդեցության տակ խորվաթական լիբերալների նախաձեռնությամբ մարտի 25-ին Զագրեբում հրավիրվեց ազգային ժողով՝ սկուպշչինա, որն ընդունեց «Ժողովրդի պահանջը» ազգային շարժման ծրագիր: Խնդիր էր դրվում Խորվաթիան, Սլովենիան միավորել Դալմաթիայի և Ռազմական սահմանի հետ ու ստեղծել Դալմաթա-խորվաթա-սլովենական եռամիասնական թագավորություն, ճանաչել Խորվաթիայի ներքին ինքնավարությունը, ձևավորել ազգային ժողովի առաջ պատասխանատու կառավարություն, խորվաթերենը դարձնել գործածական կառավարման մեջ, դպրոցում և եկեղեցում, հռչակել դեմոկրատական ազատություններ և այլն: Ապրիլի 8-ին կայսր Ֆերդինանտ I-ը բավարարեց հունգարների ազգային պահանջները, իսկ հունգարական նորաստեղծ կառավարությունը մերժեց սերբերի ու խորվաթների պահանջը՝ պատճառաբանելով որ ներկա վիճակում կարևորը հունգարական պետության քաղաքական խնդիրների լուծումն է և ոչ թե առանձին ազգերի խնդիրները բավարարելը: Դա առաջ բերեց սերբերի և խորվաթների հակամարտությունը հունգարական կառավարության հետ, որը շուտով վերածվեց պատերազմի [История Югославии, 1963ա, 420-421; Авербух, 1965, 107; Пристер, 1952, 381):

Խորվաթական ազգային շարժումը չվրիպեց հայ ազգային պահպանողական հոսանքը ներկայացնող Մխիթարյան միաբանների ուշադրությունից: Նրանք խորվաթական շարժմանն անդրադարձան «Եվրոպա» և «Բազմավեպ» պարբերականներում ու իրենց ուսումնասիրություններում: Նրանց դիրքորոշումը վերհանելը կարևոր է հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության համար:

«Եվրոպա» շաբաթաթերթը: «Եվրոպա» շաբաթաթերթի հրատարակման նախաձեռնողը կոստանդնուպոլսեցի ամիրա Հակոբ Չելեպի Տյուզյանցն էր: Նա Վիեննայի Մխիթարյաններին առաջարկեց նոր պարբերական հրատարակել, որը պետք է տարբերվեր հայ մյուս պարբերականներից, հստակ քաղաքական ուղղվածություն ունենար և ամփոփ տեղեկություններ տար Եվրոպայում կատարվող իրադարձությունների մասին: Նա թերթի ապագա լրագրողներին հորդորում էր քաղաքական հրապարակումները ներկայացնել առանց անտեղի ու ավելորդ ոգևորության, «ծանրությամբ, հանդարտությամբ, ընտրությամբ և կարելի եղածին չափ մաքուր ոճով» [Գալեմքյարեան, 1893, 100):

«Եվրոպայի» աշխատակիցները հավատարիմ մնացին Հ. Տյուզյանցի պատգամին: Թերթը հրատարակող Մխիթարյաններ Ղևոնդ Հովնանյանը, Փիլիպոս Ճամճյանը և Եփրեմ Չագլճյանը իրենց լրագրի «վախճանն ու դիտումը» համարում էին «Աստված, հայրենիք ու գիտություն»: Առաջնորդվելով այս կարգախոսով՝ նրանք պարտավորվում էին հայ ընթերցողների ազնիվ մտածողությանը համապատասխան իրենց թերթում «ժամանակիս ամեն դեպքերը, մանավանդ ներկայիս Եվրոպայի խռովութիւնները, իրենց բնական՝ աղէկ կամ գէշ գունովը նկարել, որ ընթերցողները աղէկը տեսնեն ու հետևեն, գէշն իմանան ու փախչին: Այս ամէն դէպքերուն մեջ հավատարմությունն ու ճշմարտութիւնը միշտ մէզի նպատակ դրած ենք» [«Եվրոպա», 27.06.1948, 112):

Ղեկավարվելով այս մտայնությամբ՝ Մխիթարյան միաբանության լրագրողները թերթի յուրաքանչյուր համարում հանգամանորեն լուսաբանում են 1848-1849թթ. Եվրոպական հեղափոխական, ազգային և ազատագրական շարժումները, այդ թվում խորվաթական պայքարը: «Եվրոպայի» խմբագիրները հավաստիացնում են իրենց ընթերցողներին, որ հավատարիմ կմնան ստացված լուրերը ճշմարիտ ու անկողմնակալ ներկայացնելու ստանձնած պարտավորությանը: Խորվաթների ազգային պայքարը լուսաբանելիս Վիեննայի Մխիթարյաններն օգտվում են ինչպես պաշտոնական լուրերից, այնպես էլ եվրոպական մամուլի հրապարակումներից, առանձնապես ուշադրություն չդարձնելով դրանց քաղաքական ուղղվածության վրա: Նրանք ձգտում են ավելի շատ ու բազմակողմանի տեղեկություններ տալ տեղի ունեցող անցուդարձերի մասին: Ընդսմին, Մխիթարյանները չեն բավարարվում նախկինում տպագրված հրապարակումներով: Նոր լուրեր ստանալու կամ դրանցում անճշտություններ լինելու դեպքում, նրանք բարեխղճորեն լրացնում են իրենց նախկին հրապարակումները՝ աշխատելով հավատարիմ մնալ ստացված տեղեկությունների հավաստիությանը:

Մխիթարյանները խորվաթների պայքարի պատճառների մասին: Վիեննայի Մխիթարյանները չէին դրվատում եվրոպական հեղափոխական ելույթները և Ավստրիական կայսրության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները: Նրանք այն համոզմանն էին, որ Եվրոպայի քաղաքական կայունությունը խաթարողները, «խռովություններ ու շփոթություններ» հրահրողները Ֆրանսիայի և Իտալիայի մեծ մասում տարածված «արմատականներն ու ազատություն սիրողներն են» [«Եվրոպա», 07.03.1848, 39):

Եվրոպական խռովությունների մյուս պատճառը Մխիթարյանները համարում են բնակչության աճը, ապրուստի միջոցների պակասությունը և գործազրկությունը: Այս ամնը հանգեցնում է նրան, որ մարդիկ «իրենց կերակուրը ճարելու մտքով յուսահատութեամբ ու յանդգնութեամբ զանազան չարիքներու ձեռք կը զարնեն» [«Եվրոպա», 04.04.1848, 57): Մխիթարյաններն ավստրիական կայսրության անդորրը խանգարող ժողովուրդներից մեկը համարում են ապստամբ խորվաթներին:

Վենետիկի Մխիթարյաններից պատմաբան Ղուկաս վարդապետ Ինճիճյանը խորվաթների երկիրը ներկայացնում է քարոտ, բարձր լեռնային, որը թշնամիներից պաշտպանելը հեշտ է: Նա խորվաթներին բնութագրում է որպես «բարձրահասակ, ուժով, սրտոտ, կտրիճ մարդիկ», որոնք փոքր հասակից լավ են տիրապետում զենքին: Նա զարմանում է, որ «ասանկ կտրիճ ազգը որ պէտք էր մէկ զատ թագավորություն ունենալ, միշտ ուրիշ տէրութեանց տակը մնացեր է, ուրիշ տկար թագավորություններու ծառայել է, տկար ազգը վրանին իշխել է»: Ղ. Ինճիճյանը դրա պատճառը համարում է խորվաթների պառակտվածությունը, անմիաբանությունը, «մէջերնին անչափ հնուց քեն պահելը»: Նրանց մեջ «անչափ իշխող ոխակալության և վրեժխնդրության կիրքը» թույլ չի տալիս համախմբվել, իտալացիների նման լինել միաբան, հայրենասեր ու պայքարել իրենց անկախության համար [Ինճիճյան, «Ազգասէր», 1815, 28-33):

«Եվրոպա» պարբերականն, անդրադառնալով 1848 թ. սկզբին Ավստրիական կայսրությունում «իրենց ազգությունը պահելու և առաջացնելու համարե ոտքի ելած ժողովուրդների պայքարին, նշում է, որ խորվաթների ազգային շարժումն ուղղված է ոչ թե ավստրիական, այլ՝ հունգարական տիրապետության դեմ: Թերթի կարծիքով՝ հունգարացիները

չբավարարվեցին 1848 թ. մարտի իրադարձությունների ընթացքում ձեռք բերած նվաճումներով: Նրանք ցանկանում են սլավոնական ժողովուրդներին, մասնավորապես՝ սլովակներին, խորվաթներին և ռուսիներին, «իրենց հետ և իրենց պես խորհրդարանին միացած լինելով՝ ժողովին մեջ նրանց մաճառներուն խոսիլ տան և իբրև թե իրենք անոնց վրա տիրող ազգ ձևանան: Սլավյան ցեղերն ընդդիմացան և հունգարացիներից բաժանվել, իրենք իրենց կառավարել և Վիեննայի հետ ուղղակի կապ ունենալ ուզեցին» [«Եվրոպա», 16.05.1848, 84]:

Նույն դիրքորոշումն իր աշխատությունում արտահայտում է պատմաբան, լեզվաբան Ղևոնդ վարդապետ Հովնանյանը: Նրա կարծիքով՝ «զորավոր և անկախ տերություն ունենալու» հունգարացիների ձգտումն այնչափ մեծ էր, որ իր կազմի մեջ մտնող ազգություններին «ցանկանում էին իրենց հետ ձուլել մեկ ընել»: Դա այնպես գրգռեց այլ ազգերին, որ շուտով «մեջերնին մեծ երկպառակություն ու ներքին պատերազմ բրդավ»: Հունգարացիների դեմ ոտքի ելան նրանց թագավորության մաս կազմող խորվաթները, սերբերը, սլովենցիներն ու սահմանաբնակները, որոնց «ազգայնութեան ոգին արթընցած ըլլալով և Մաճառներուն զիրենք բոլորովին զսպելու բաղձանքեն՝ ավելի ևս գրգռվելով, կուզեին անոնցմէ բաժնուլի և ինքնագլուխ տերություն մը կազմել կայսերական պաշտոնարանին տակ» [Հովնանեան, 1860դ, 265-266]:

Վիեննայի Մխիթարյաններն Ավստրիական կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցող շատ իրադարձություններ ներկայացնում են որպես դրանց անմիջական ականատես: Նրանք գրում են, որ 1848 թ. մարտին Վիեննայում սկսված ապստամբությունը կրում է Փարիզում փետրվարյան «խռովության» հաղթանակի ազդեցությունը և հանգեցնելու է անխուսափելի բարեփոխումների: Մխիթարյանների պատմելով՝ Կ. Մետտեռնիխի պաշտոնանկությունը, գրաքննության վերացումը և սահմանադրություն հռչակելու կայսրի խոստումը կայսրության «գավառներում մեծ ուրախություն և ցնծություն է պատճառել» [«Եվրոպա», 28.03.1848, 53 41]: Հունգարներն ու սլավոնական ժողովուրդները կայսրին մի շարք պահանջներ են ներկայացրել, որոնք Մխիթարյաններն անվանում են աղերսագիր: Նրանք ռեղեկացված էին, որ ապրիլի 8-ին Ֆերդինանդ I-ը բավարարեց հունգարացիների պահանջների մեծ մասը:

«Եվրոպայի» լրագրողների դիտարկմամբ՝ հունգարացիները ցանկանում են Տրանսիլվանիան իրենց միավորել, ճնշել խորվաթների շարժումը, ուստի նրանք «կատաղությամբ ոտքի ելան ու իրենց զայրութը Հունգարացիներուն վրայ թափելու սկսան»: Չհանդուժելով այդ ըմբոստությունը՝ հունգարացիները սկսեցին խորվաթներին «նվաճել ու գրգռել, իսկ նրանց կառավարիչ (բան) Իոսիպ Ելաչիչը երկրի խաղաղությունը վրդովեցնողների և ապստամբություն հրահրողների դեմ «պատերազմական օրենք հրատարակեց» [«Եվրոպա»,16.05. 1848, 84]:

Մարտի 23-ին կայսրը գրանիչարների գնդապետ Ի. Ելաչիչին նշանակեց Խորվաթիայի բան, ում երկու օր անց այդ պաշտոնում ընտրեց նաև խորվաթական սկուպշինան: Ի. Ելաչիչը թեպետ մասնակիորեն հարում էր իլլիրիզմին, բայց խորվաթական հայրենասեր չէր: Նա ավելի շատ ավստրիական զինվորական էր, ծառայում էր Վիեննայի արքունիքին և պաշտպանում էր նրա շահերը: Բայց հայրենիքում ազդեցությունը չկորցնելու և քաղաքականապես չմեկուսանալու նպատակով հարկադրված էր հայրենանպաստ քայլեր անել ու աջակցություն փնտրել իլլիրիստական կուսակցության կողմից» [Фрейдзон, 2001, 113; История XIX века, 1938ե, 123-124].

1848 թ. գարնանը խորվաթա-հունգարական հակասությունները լրջորեն սրվեցին՝ կապված հունգարական սեյմի որոշումների հետ, որոնք խորվաթներին զրկում էին ազգային

իրավունքներից: Ի հակադրություն դրա՝ Ի. Ելաչիչը 1848 թ. ապրիլի 19-ին շրջաբերական հրապարակեց, որն արգելում էր տեղական իշխանության մարմիններին ենթարկվել հունգարական կառավարության որոշումներին: Հունգարական կառավարությունը բազմիցս փորձեց բարելավել հարաբերությունները խորվաթների հետ և այդ նպատակով ապրիլին Ի. Ելաչիչին մի քանի անգամ Պեշտ հրավիրեց: Նա մերժեց բանակցություններ վարելու առաջարկությունները և շարունակեց հունգարացիների նկատմամբ թշնամական քաղաքականություն վարել [История Югославии, 1963ա, 421; Фрейдзон, 2001, 114]

Մխիթարյանները գրում են, որ Ֆերդինանդ I-ը ապրիլի 25-ին՝ իր ծննդյան օրը կայսրության ժողովուրդներին սահմանադրություն շնորհեց, որը «Եվրոպայի ամենէն» ավելի ազատական սահմանադրութիւններէն մեկն է» [«Եվրոպա», 09.03.1848, 79]:

Կայսերական սահմանադրությունն առաջադիմական փաստաթուղթ էր այն իմաստով, որ բուրժուական բազմաթիվ ազատություններ էր շնորհում, բայց չէր լուծում ազգային հարցը: Սահմանադրության առաջին հոդվածը Ավստրիան հայտարարում էր «միասնական ու անբաժան», որը չէր բավարարում բազմաթիվ ժողովուրդների ինքնավարության ձգտումները: Այն լուրջ հարված էր ամենից առաջ հունգարացիներին, որոնք իրենց նոր պետության մեջ ներառել էին Իլլիրիայի մեծ մասը, ինչպես նաև հայրենի հողերը կորցնող խորվաթներին [Пристер, 1952, 366]:

Սահմանադրության հռչակումից հետո խորվաթա-հունգարական հարաբերությունները Մխիթարյանների դիտարկմամբ մնացին լարված: «Եվրոպան» այդ կապակցությամբ հայտնում է, որ հունգարական կառավարությունը խիստ դժգոհ է խորվաթների բռնած ուղուց, մանավանդ՝ Ի. Ելաչիչի «իրենց դէմ պատերազմական օրենք հրատարակելուց»: Հունգարիայի փոխարքա Ստեֆան արքիդուքսը մայիսի 11-ին Ի. Ելաչիչին հատուկ հրամանագրով կարգադրեց երեք օրվա ընթացքում հրաժարվել իր արձակած հրամանագրերից, վերջ տալ անօրինական գործողություններին և սլովենացի գեներալ Յայնոշ Գրաբովսկուն նշանակեց Խորվաթիայի ու Սլովենիայի կոմիսար: Այդ հրամանագիրը վրդովմունք ու զայրույթ առաջացրեց խորվաթական ավագանու ժողովում, իսկ կատաղած ժողովուրդը հրապարակավ այրեց Ստեֆան արքիդքսի հրամանագիրը, նրա և Հունգարիայի կառավարության անդամների նկարները:

Մխիթարյանների կարծիքով՝ խորվաթները, ելնելով կայսրության նկատմամբ իրենց ցուցաբերած «սիրուց ու անոր հակառակ Մաճառներուն նենգավորությունը տեսնելով, շատ կիուսան, որ կայսրն իրենց կօգնե ու իրենց Մաճառներու տակեն կազատե»: Նրանք որոշել են Ավստրիայի կայսրից օգնություն չստանալու դեպքում «իրենք Մաճառներուն դեմ ելլեն, թե որ անոնք իրենց երկիրը հարձակին ու ազգայնությունենին նվաճել ուզեն» [«Եվրոպա», 23.05.1848, 89]:

Մխիթարյանները ճիշտ են կռահում, որ խորվաթները ձգտում են անջատվել հունգարացիներից, սակայն «հաստատ մտքերնին դրած են Ավստրիայեն չազատվել»: Նրանք չեն ցանկանում այլևս հպատակվել հունգարացիներին, այլ «իրենք իրենցմե զատ կառավարություն կուզեն ունենալ կայսեր հրամանին ու իշխանության տակը»: Մխիթարյանների համոզմամբ խորվաթներն իրենց հավատարմություն Ավստրիական կայսրությանը ցուցաբերում են Լոմբարդո-Վենետիկյան նահանգում, որտեղ «մեծ քաջությամբ կայսեր համար իտալացիների դեմ կպատերազմին» [«Եվրոպա», 30.05.1848, 95]:

Մխիթարյանների տեղեկություններով Իտալիայում ապրող խորվաթները Վենետիկի հանրապետությանը դեմ են, նրանց «ձեռքեն քաշած հարստահարութիւննին կը յիշեն, և իրենց հոչակավոր հավատարմութիւնը կը պահեն ու Կայսեր անունը համար մեռնելու պատրաստ են» [«Եվրոպա», 02.05.1848, 75]:

Խորվաթների հավատարամությունն Ավստրիական կայսրությանը փաստում է նաև Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպ» երկշաբաթաթերթը:

«Բազմավեպ» երկշաբաթաթերթը: Հայ պարբերական մամուլի պատմության մեջ յուրահատուկ տեղ ունեցող «Բազմավեպ» պարբերականի առաջին խմբագիր (1843-1848) Գաբրիել վարդապետ Այվազովսկին հայտնի դեմք էր Վենետիկի Մխիթարյանների շրջանում: Նրա խմբագրած պարբերականն, ի տարբերություն քաղաքական ուղղվածություն ունեցող «Եվրոպայի», հետևում էր Ղուկաս վարդապետ Ինճիճյանի «Եղանակ Բյուզանդյան» հանդեսի ուղեգծին [Կարինյան, 1960բ, 195]:

Նա խոստանում է իր ազգասեր ընթերցողներին «բարեկիրթ և ուսումնական ազգէրեն ետ չիմնալու» նպատակով «համառօտ, պարզ ու զվարճալի ոճով» օգտակար տեղեկություններ տալ եվրոպական կրթության, մշակույթի և գիտության, տնտեսության, արհեստների զարգացման ու նորությունների մասին [«Բազմավեպ», 1843ա, 3-4]:

Վենետիկի Մխիթարյանները, ելնելով իրենց պարբերականի ուղվածությունից 1848 թ. եվրոպական հեղափոխական և ազգային ազատագրական շարժումներին երբևէ չանդրադարձան: Ըստ «Բազմավեպի», եվրոպական հեղափոխական շարժումների կազմակերպիչներն ու ղեկավարներն արմատականներն են: Նրանք Եվրոպայի «շատ ճարտար և խելացի մարդիկ են», որոնք «անհավատ են…, ուրիշ ազգերուն ալ գայթակղելու և սխալելու պատճառ կըլլան» ու ցանկանում են «ամէն մարդիկ մէկ տեսակի վերածել» [«Բազմավեպ», 15.03.1851]:

«Բազմավեպի» խմբագիրը չլուսաբանեց նույնիսկ իտալացիների ազատագրական պայքարը և միայն մեկ անգամ անդրադարձավ ավստրիական տիրապետության դեմ վենետիկցիների ըմբոստությանը, որն անուղղակիորեն առնչվում է խորվաթների հետ:

Գ. Այվազովսկին պատմում է, որ վենետիկցիները Կ. Մետեռնիխի պաշտոնանկությունը համարելով «կարծես թէ իրենց ազատութեան ավետիսը…ամէն տեղ սկսան ոտքի ելնել»: Մարտի 18-ին «խաղաղասեր ու բարեսիրտ» վենետիկցիները ոգևորված սահմանադրություն հոչակելու Ավստրիայի կայսրի խոստումից՝ հեղեղի պես լցվեցին սուրբ Մարկոսի հրապարակը և իսկական տոնախմբություն կազմակերպեցին, որն անհնարին է բառերով պատմել: Ափսոս, գրում է Գ. Այվազովսկին, որ վենետիկցիների ցնծությունը կարճ տևեց, նրանց «այն օրուան ուրախութիւնը բոլորովին «առանց տրտմութեան չը վերջացավ»:

Ավստրիական իշխանություններին հավատարմորեն ծառայող խորվաթական գնդերը հարձակվեցին անզեն ժողովրդի վրա ու շատ արյուն թափեցին: Խորվաթների վայրագության հետևանքով «սարսափն ու տրտմությունը տիրեց քաղաքի վրա»: Մարտի 22-ին վենետիկցիները չներելով խաղաղ բնակչության նկատմամբ իրագործած «անգթությունները», հարձակվեցին նավարանը պաշտպանող խորվաթների վրա ու սպանեցին նրանց հրամանատար Մարինովիչին, ում նկատմամբ «սաստիկ ատելություն ունեին» [«Բազմավեպ», 01.05.1848, 137-139]:

Գ.Այվազովսկին ականատեսի աչքերով պատմելով Վենետիկի դեպքերի մասին այլևս չի անդրադառնում իտալացիների ազատագրական պայքարին: Նա գերադասում է «իբրև օտար և

բարեկամ տէրութեան հավատարիմ հպատակ», այսուհետև մնալ «անխոով սրտիւ հանդիսատես…հիւրընկալ երկիրներուն յեղափոխութեանց մէջ» [«Բազմավեպ», 01.05. 1848, 141]:

Վիեննայի Մխիթարյաններն ուրախությամբ գրում են, որ սուրբ Ղազարի վանքը և մեծարգո Մխիթարյանները «Վենետիկի շփոթութիւններուն մէջ հանգիստ ու հանդարտ են» [«Եվրոպա», 25.04.1848, 70]:

Մխիթարյանները խորվաթական պայքարի մասին: 1848 թ. մայիսի 15-16-ին Վիեննայում հեղափոխական նոր շարժումից վախեցած Ֆերդինանդ I-ը փախավ Ինսբրուկ: Խորվաթական կալվածատերերն ու բուժուազիան այս պարագայում նպատակահարմար գտան բացահայտ հանդես գալ Խորվաթիայի և Սլովենիայի ազգային իրավունքների իրականացման պահանջով: Ի. Ելաչիչը մայիսի 18-ին հրամանագիր արձակեց հունիսի 5-ին խորվաթական սաբորի ընտրություններ անցկացնելու մասին [История южных и западных славян, 1969, 222; История Югославии, 1963ա, 422].

Վիեննայի Մխիթարյանները հասկանում էին, որ Ի. Ելաչին Ավստրիական կայսրությանը հավատարիմ անձնավորություն է և հակահունգարական քաղաքականություն է վարում: Նրանք քաջատեղյակ էին, որ Վիեննայի մամուլն ու հասարակական կարծիքը հանդես են գալիս խորվաթներին օգնելու առաջարկությամբ: Մխիթարյանների դիրքորոշումն այս հարցում երկփեղկված է: Մի կողմից՝ նրանք ներքուստ բավարարված էին, որ խորվաթները պայքարում են կայսրության գլխավոր հակառակորդ Հունգարիայի դեմ, մյուս կողմից՝ դժգոհ էին Ի. Ելաչիչի անկախ պահվածքի և կայսրին անհնազանդություն դրսևորելու հարցում: «Եվրոպան» գրում է, որ Ի. Ելաչիչն ինքնագլուխ, առանց կայսրի հրամանագրի, խորվաթների գավառային ժողով է հրավիրել՝ երկրի վիճակը քննարկելու համար: Կայսրը խիստ վրդովվել է ու պահանջել 24 ժամվա ընթացքում ցրել ժողովը և «երկրի հանդարտությունը»վերականգնել: Նա հունիսի 10-ի հրովարտակով, հանդիմանել է Ի. Ելաչիչին թույլ տված «զանազան ամբաստանությունների» համար ու մինչ նրա լիակատար արդարացումը, հայտարարել պաշտոնազրկված: Ըստ Մխիթարյանների՝ կայսրը միաժամանակ հորդորում է խորվաթներին՝ ջանք չթափել հունգարացիներից առանձնանալու ուղղությամբ, պահպանել նրանց հետ միությունը և խոստանում, որ «իրենց ազգայնությանը, լեզվին ու կրոնին վնաս մը չլլար» [«Եվրոպա», 20.06.1848, 108]:

Ղևոնդ Հովնանյանը նույնպես փաստում է, որ Խորվաթիայի կուսակալ Ի. Ելաչիչը հունգարական կառավարությունից «անկախ դիրք մը կբռներե և կայսրի Ինսբրուկում եղած ժամանակ խնդրեց «իրենց Մաճառներուն անկախ ըլլալը հաստատե, բայց ինքնակալը՝ վերջինները չգրգռելու համար՝ անոնց խնդիրը մերժեց» [Հովնանեան, 1860դ, 266]:

Մխիթարյանների այս տեղեկությունները միանգամայն ճիշտ են, միայն թե նրանք չեն կարողանում բացատրել խորվաթների նկատմամբ կայսրի վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը և Ի. Ելաչիչին պաշտոնանկ հայտարարելը: Բանն այն է, որ մայիսյան իրադարձություններից հետո խորվաթները կայսրությունը համարեցին թուլացած, իսկ լիբերալներն իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով սկսեցին աջակցություն փնտրել կայսրության կազմում ապրող մնացած սլավոնական ժողովուրդների ազգային շարժման մեջ: 1848 թ. ապրիլի 20-ին խորվաթ կալվածատեր և գրող Իվան Կուկկուլեվիչ-Սակցինսկին մամուլում

հանդես եկավ համասլավոնական համագումար հրավիրելու առաջարկությամբ [История южных и западных славян, 1969, 243]:

1848 թ. հունիսի 2-ին Պրահայում բացված համասլավոնական համագումարն անցավ Հաբսբուրգների արքայատոհմի նկատմամբ կոռեկտության և ավստրո-սլավոնականության գաղափարների ներքո: Չնայած դրան՝ ձգտելով թուլացնել սլավոնական ժողովուրդների մերձեցումը և խորվաթական ազգային շարժումը ենթարկել իրեն, Ֆերդինանդ I-ը Ի. Ելաչիչից պահանջեց անվերապահորեն ենթարկվել հունգարական կառավարությանը: Հունիսի 5-ին բացված խորվաթական սաբորը Ի. Ելաչիչին վերականգնեց բանի պաշտոնում բռնապետական լիազորություններ շնորհեց: Ի պատասխան դրա՝ Ֆերդինանդ I-ը հունիսի 10-ի հրովարտակով Ի. Ելաչիչին պաշտոնանկ արեց ու զրկեց զինվորական կոչումից, որին անդրադառնում են «Եվրոպան» և Ղևոնդ Հովնանյանը:

Կայսերական կամարիլիան Ի. Ելաչիչի նկատմամբ երկակի դիրք բռնեց. կայսրը նրան պաշտոնազրկեց, սակայն նրա եղբայր արքիդուքս Կարլ Ֆրանցը Ի. Ելաչիչին խորհուրդ տվեց վերադառնալ Խորվաթիա և շարունակել պայքարը Հունգարիայի դեմ [История Югославии, 1963а, 422; Авербух, 1965, 110]:

«Եվրոպայի» հավաստի տեղեկությամբ՝ 1848 թ. ամռանը հունգարա-խորվաթական հակամարտությունը գնալով խորացավ, կողմերը սկսեցին լրջորեն նախապատրաստվել պատերազմի: Հուլիսի 15-ին Ակրամի մոտ հունգարական զորքերը պարտություն կրեցին սերբա-խորվաթական ուժերից, որից թերթը հետևություն է անում, որ հունգարացիներն այս «չարիքը տեսնելով մեծ պատրաստություններ են տեսնում իրենց ծրագրերն իրականացնելու համար [«Եվրոպա», 25.07.1848, 128]:

«Եվրոպան» այնուհետև անդրադառնում է հունգարական սեյմի 1848 թ. հուլիսի 11-ի որոշմանը, որով կառավարությունը 42 միլիոն ֆլորին է հատկացնում խորվաթների ապստամբությունը ճնշելու համար, եթե նրանք «հունգարացոց հետ միանալ չուզեն»: Թերթն ընդգծում է, որ խորվաթները նույնպես նախապատրաստվում են հունգարացիների դեմ պատերազմի: Խորվաթները ձգտում են հասնել այն բանին, որ իրենց, սլովենների և դալմաթացիների համար ճանաչվի խորվաթական բանի գլխավորությամբ առանձին կառավարություն, առևտրի, պատերազմի և վաճառականության հարցերում կախում ունենան միայն ավստրիական պաշտոնյաներից, իրենց կառավարության ենթակայության տակ մտցնեն Ռազմական սահմանները, պաշտոնական լեզու ճանաչվի սլովեներենը, Դալմաթիան միանա Խորվաթիային և այլն [«Եվրոպա», 25.07.1848, 128]:

«Եվրոպայի» լրատվությամբ՝ Ի. Ելաչիչը հուլիսին կայսրի հետ հանդիպումից հետո ջանում է հանդարտեցնել խորվաթներին՝ հույս ունենալով, որ Իոհան արքիդքսի միջնորդությունը կարող է կարգավորել հակամարտությունը: Բայց արքիդուքսը չկարողացավ այդ նպատակով Ակրամ գնալ, քանի որ Ֆրանկֆուրտյան խորհրդարանի կողմից ընտրվեց Գերմանիայի կայսերական կառավարիչ: Պաշտոնը ստանջնելու համար նա մեկնեց Ֆրանկֆուրտ, որով հաշտեցման գործը մնաց անավարտ:

Հուլիսի 28-ին Ի. Ելաչիչը Հունգարիայի կառավարության ղեկավար Լ. Բատտյանիի հետ հաշտության բանակցություններ վարելու նպատակով մեկնեց Վիեննա, որտեղ Մխիթարյանների պատմելով՝ Ի. Ելաչիչի պատվին ջահերով գիշերային հանդես եղավ:

Ի. Ելաչիչը հանդիպման ժամանակ հանդես եկավ ոչ այնքան խորվաթական ազգային խնդիրների, որքան ավստրիական կայսրության դիրքերից: Նա Հունգարիային հանդիմանեց կայսերության միասնությունը քայքայելու մեջ և Լ. Բատտյանիին առաջարկեց ստանձնել Ավստրիայի պետական պարտքի մի մասը, ռազմական, ֆինանսական և արտաքին հարաբերությունների գործեր զիջել Վիեննայի արքունիքին, ճանաչել Խորվաթիայի ու Վոյեվոդինայի իրավունքները: Լ. Բատտյանին չկարողացավ զրույցը տանել կոնկրետ հունգարա-խորվաթական հարաբերությունների շուրջը և կորցնելով համբերությունը՝ վրդովված բացականչեց. «Մինչ նոր հանդիպում Դրավայում»: Այս գետը հանդիսանում էր Հունգարիայի և Խորվաթիայի սահմանաբաժանը, ուստի Ի. Ելաչիչը նրան պատասխանեց. «Ավելի շուտ Դանուբում» [История Венгрии, 1972բ, 146; Фрейдзон, 2001, 117]:

Դա բացահայտ մարտահրավեր էր ու հակամարտությունը շարունակելու վճռականություն: 1848թ. օգոստոսին Լ. Բատտյանին մի վերջին անգամ փորձեց խորվաթների հետ հակասությունը կարգավորել խաղաղ ճանապարհով և պատրաստ էր նրանց զիջումներ անել, ընդհուպ մինչև Խորվաթիայի լրիվ անջատումը, միայն թե խուսափի պատերազմից: Լ. Բատտյանին և Ի. Դեակը օգոստոսի 29-ին խնդրեցին Վիեննայի արքունիքին թույլ չտալ Ի. Ելաչիչի հարձակումը Հունգարիայի վրա, բայց աջակցություն չստացան [Авербух, 1965, 159]:

«Եվրոպան» տեղեկացնում է, որ հունգարական երկու պաշտոնյաներ Վիեննա են եկել «կայսրը իրենց կողմը ձգելու» մտադրությամբ: Թերթն արձանագրում է հունգարա-խորվաթական հաշտության չկայանալը և Իոհան արքիդքսի միջնորդության ձախողումը: Դրանում Մխիթարյանները մեղադրում են հունգարացիներին, որոնք չեն ցանկանում զիջել սերբերին ու խորվաթներին: Իրականում Լոմբարդո-վենետիկյան նահանգում իտալացիների դեմ հուլիսի 24-ին գեներալ Կ. Ռադեցկու տարած հաղթանակից ոգևորված Ֆերդինանդ I-ը որոշեց դաս տալ հունգարացիներին ու շարունակեց պատերազմը:

Ղևոնդ Հովհաննյանը փաստում է, որ հաշտություն չկնքելուց շատ չանցած «զանազան ազգայնութեանց մէջ պատերազմ բացուեցաւ և սաստիկ արյունահեղություն կ'ըլլար» [Ղևոնդյան, 1860դ, 266]:

Օգոստոսի 31-ին Ի. Ելաչիչը գրավեց Ֆիումեն և պաշտոնազրկեց հունգարական կառավարչին: Կայսրը սեպտեմբերի 4-ին Ի. Ելաչիչին վերականգնեց բանի պաշտոնում, կտրուկ ավելացրեց Խորվաթիային զենքի մարտակարարում և խորվաթներին գործողությունների ազատություն շնորհեց «հունգարական ոտնձգությունների դեմ նրանց արդարացի պայքարում» [Пристер, 1952, 382; История Венгрии, 1972բ, с. 147; История Югославии, 1963ա, 425]:

Օգտվելով ավստրիական արքունիքի աջակցությունից՝ Ի. Ելաչիչը սեպտեմբերի 7-ին պատերազմ հայտարարեց Հունգարիային, իսկ երեք օր անց անցավ Դրավա գետը և ուղղություն վերցրեց դեպի Պեշտ, որի մասին հավաստի տեղեկություն են տալիս Մխիթարյանները:

«Եվրոպան» Ի. Ելաչիչի արշավանքի հետևանքով Հունգարիան համարում է «խռովության և այլայլության մեջ», թեպետ սեպտեմբերի սկզբներին երևելի կռիվներ տեղի չունեցան:

Սեպտեմբերին հունգարական կառավարությունը բազմամարդ պատվիրակություն ուղարկեց Վիեննա՝ խնդրելով հաշտվել ու կասեցնել Ի. Ելաչիչի հարձակումը, սակայն կայսրը չբավարարեց նրանց խնդրանքը:

«Եվրոպան» ամբողջությամբ տպագրում է հունգարացիների խնդրանքի տեքստը և կայսրի մերժողական պատասխանը, որը պայմանավորված էր կայսրության նկատմամբ խորվաթների «հավատարմությամբբ, ինչը «դարերե ի վեր հայտնի է»: Թերթի համոզմամբ՝ Ի. Ելաչիչը հունգարացիների դեմ դուրս է եկել «կայսեր աթոռն ու թագը ամբողջ պահել ու պաշտպանելու», ինչպես նաև հունգարացիներին ներկայացրած «իրենց պահանջմունքներն առաջ տանելու» համար [«Եվրոպա», 19.09.1848, 160]:

Մխիթարյանները ճիշտ են ներկայացնում խորվաթների պայքարի նպատակը, որոնք, չցանկանալով դուրս գալ Ավստրիական կայսրության կազմից, ձգտում էին հունգարական թագավորությունից ստանալ ինքնավարություն և ազգային մի շարք արտոնություններ: Դրան հասնելու համար խորվաթներն անվերապահորեն աջակցում էին ավստրիական իշխանություններին հունգարացիների դեմ պայքարում:

Լոմբարդո-Վենետիկյան նահանգում իտալացիների դեմ կռվող ավստրիական զորքերի կազմում գտնվում էին նաև խորվաթներ, որոնք անվերապահորեն կատարում էին ավստրիական զինվորական ղեկավարության հրամանները: Ջենովայում խորվաթ զինվորներին անգթորեն կոտորում էին իտալացի կանանց ու աղջիկներին: Միլանում խորվաթներն այն աստիճան դաժան էին վարվում իտալացիների նկատմամբ, որ ավստրիական զորքերի հրամանատար գեներալ Կ. Ռադեցկին հարկադրված նրանց քաղաքից դուրս բերեց: Խորվաթների կառավարիչ, գնդապետ Ի. Ելաչիչը մարտական մկրտությունն ստացել էր Իտալիայում՝ Ռադեցկու ենթակայության տակ: Նա Հաբսբուրգների արքայատոհմին նվիրված ու հավատարիմ անձնավորություն էր, ում բանակի կորիզը կազմող գրանիչարները նույնպես պատերազմական փորձ էին ձեռք բերել Իտալիայում [Авербух,1965,168; История Венгрии, 1972բ, 143-144].

«Եվրոպան», անդրադառնալով Ի. Ելաչիչի հետագա գործողություններին, գրում է, որ նա, Դրավա գետն անցնելով, մտավ Հունգարիա և երեք հայտարարություն արեց: Դրանցից առաջին հայտարարությունն ուղղված էր Ավստրիայում ապրող ժողովուրդներին, երկրորդը՝ հունգարացիներին և երրորդը՝ Հունգարիայում գտնվող ավստրիական զորքին: «Եվրոպան» համառոտ ներկայացնում է հայտարարություններից յուրաքանչյուրը, որը Հունգարիայում տեղի ունեցած դեպքերի «հիշատանությունն է ու կարդացողներուն լույս կրնա տալ»:

Ըստ թերթի՝ առաջին հայտարարության իմաստն այն է, որ 1848 թ. մարտին ավստրիական կայսրության բոլոր հպատակներն ազատություն ու հավասարություն ստացան, մինչդեռ խորվաթները, սլովենները, սերբերն «ավելի ևս գերության մեջ մտան և ընկճվեցան»: Ի.Ելաչիչը գրում էր, որ Հունգարիայի կազմում ապրող ժողովուրդների նկատմամբ տարվում է ազգային խտրականություն, հունգարերենը նրանց համար պետական լեզու է հայտարարվել: Հունգարացիները բոլոր ժողովուրդների նկատմամբ «անարդար գործեր» են իրականացնում, իսկ Հունգարիայի խորհրդարանը շարունակում է հակախորվաթական որոշումներ ընդունել:

Ի. Ելաչիչն իրեն համարելով կայսրին «հավատարիմ հպատակ», դժգոհում էր, որ իրենք կայսրից օգնություն խնդրեցին, բայց ապարդյուն: Նա միաժամանակ նշում էր, որ խորվաթների և սլովենների ազգային խորհուրդների ընդունած որոշման իր և ներքին համոզմունքի համաձայն համաձայն ետ չի կանգնելու իրենց առաջարկած պայմաններից: Բայց, քանի որ հունգարական կառավարությունն իրենց պայմանները չի ընդունում և դրանով «գեղեցիկ միապետության կործանումը կուզեն», ուստի իր պարտքն է համարել զենք վերցնել:

Հունգարացիներին ուղղված ուղերձում Ի. Ելաչիչը հայտարարում էր, որ ինքը նրանց հետ թշնամություն չունի և զենք է վերցրել այն մարդկանց դեմ, ովքեր ջանում են կործանել Ավստրիական կայսրությունը: Նա նշում է, որ իր նպատակը վնասաբեր և անհմուտ կառավարիչների լծից հունգարացիներին ազատելն է, և խնդրում է իրեն ընդունել որպես «բարեկամ ու դաշնակից»:

Երրորդ հայտարարությունում Ի. Ելաչիչը Հունգարիայում գտնվող ավստրիական զորքին հայտնում է, որ ինքը նրանց նկատմամբ թշնամություն չունի, և հորդորում է զենքն իր դեմ չուղղել, քանի որ «խորվաթները պատրաստ են կայսրի համար կյանք տալ ու արյուն թափել» [«Եվրոպա», 19.09.1848, 160]:

«Եվրոպան» Ի. Ելաչիչի հայտարարությունները տպագրում է առանց որևէ մեկնաբանության և դիրքորոշում ցուցաբերելու: Թերթը բավարարվում է դրանք շարադրելով, բայց ակնհայտ է, որ հայտարարությունների բովանդակությունը միանգամայն համահունչ էր թերթի դիրքորոշմանը: Ի. Ելաչիչը հանդես էր գալիս որպես Ավստրիական կայսրության պաշտպան, նրան նվիրված զինվորական ու առաջացած հակամարտությունում մեղադրում հունգարական կառավարությանը: «Եվրոպան» նույնպես հանդիմանում է հունգարացիներին՝ կայսրության անդորրը խանգարելու և անջատողական տրամադրություններ սերմանելու համար:

«Եվրոպայի» պատմելով՝ Ի. Ելաչիչը Հունգարիայի տարածքում անդադար առաջ է ընթանում, հունգարական ազգային գվարդիան նրան չի դիմադրում և զենքը ցած գցելով փախչում է, իսկ կանոնավոր զորքը չի ցանկանում պատերազմել ու ետ է քաշվում [«Եվրոպա», 03.10.1848, 167-168]:

Մխիթարյաններն իրավացի են այնքանով, որ Անդրդանուբյան բանակի հրամանատար Ադամ Տելեկին հրաժարվել էր պատերազմել Ի. Ելաչիչի դեմ: Այդ պատճառով սեպտեմբերի 13-ին Լ. Բատտյանին հարկադրված դիմեց Անդրդանուբյան շրջանի բնակչությանը՝ կոչ անելով պայքարի ելնել թշնամու դեմ: Հունգարական կանոնավոր բանակից զինվորներն սկսեցին համալրել հոնվեդական բանակի շարքերը, որի վրա ընկավ պատերազմի սկզբնական շրջանի ծանրությունը:

Ի. Ելաչիչի բանակի հիմնական ուժը կազմում էին Իտալիայում կռված գրանիչարների ջոկատները, որոնք սեպտեմբերին անարգել առաջ էին շարժվում Հունգարիայի տարածքում: 1848 թ. սեպտեմբերի 28-ին Պեշտում ավստրիական զորքի հրամանատար կոմս Լամբերգի սպանությունից հետո Ավստրիայի կայսրը հոկտեմբերի 3-ին Ի. Ելաչիչին նշանակեց Հունգարիայում թագավորական կոմիսար և գլխավոր հրամանատար: Նա միաժամանակ արձակեց հունգարական սեյմն ու պատերազմական վիճակ հայտարարեց Հունգարիայում [Авербух, 1965,168; История Венгрии, 1972բ, 156]:

Ղևոնդ Հովնանյանը հավաստի պատմում է այս մասին [Հովնանյան Հ.Ղ.վ. 1860դ, 267-268], իսկ «Եվրոպան» առանց որևէ մեկնաբանության տպագրում է կայսրական հրովարտակն ամբողջությամբ: 1848 թ. սեպտեմբերի 29-ին հունգարական բանակը Պակոզդայի մոտ հաղթանակ տարավ Ի. Ելաչիչի նկատմամբ, ով զինադադար կնքեց գեներալ Մոգայի հետ ու հնարավորություն ստացավ իր զորքով անցնել Ավստրիա:

«Եվրոպան» Ի. Ելաչիչի այս պարտությանը չի անդրադառնում և հայտնում է, որ նա, ստանալով հոկտեմբերի 6-ին Վիեննայում բռնկված ապստամբության լուրը, իր զորքով շտապեց այնտեղ: Թերթն ամբողջությամբ տպագրում է ավստրիական խորհրդարանի պատգամավորներին Ի. Ելաչիչի հղած նամակը, որում նա բացատրում էր, որ ինքը հավատարիմ է մնում կայսրին ու նպատակ է հետապնդում պաշտպանել կայսրությունը բռնություններից [«Եվրոպա», 17.10.1848, 176]:

Վիեննայի Մխիթարյաններ Ղևոնդ Հովնանյանի և Գրիգոր Գովրիկանի հավաստի պատմելով՝ Վիեննայի ապստամբների դեմ իրենց զորքը դուրս բերեցին ավստրիական բանակների հրամանատարներ Վինդիշգեցը, Աուերսբերգը և խորվաթների կուսակալ Ի. Ելաչիչը: Արյունահեղ կռիվներից հետո նրանք մտան մայրաքաղաք ու տիրեցին այն [Հովնանեան, 1860դ, 270; Գովրիկեան, 1879, 279]:

«Եվրոպան» մանրամասն պատմում է կայսերական զորքերի և Ի. Ելաչիչի կողմից նոյեմբերի 1-ին Վիեննան ապստամբներից ազատագրելու մասին: Դրանից հետո Խորվաթիայի կուսակալը նորից իր զորքով շարժվեց հունգարացիների վրա, որոնք ըստ թերթի՝ «այսչափ չարեաց պատճառ եղան» [«Եվրոպա», 07.11.1848, 186]:

Մխիթարյանները հայտնում են, որ Ֆերդինանդ I-ը Վիեննայի ապստամբության ճնշման գործում ցուցաբերած ջանքերի համար նոյեմբերի 24-ի հրամանագրով Ի. Ելաչիչին պարգևատրեց սուրբ Լեոպոլդի մեծ խաչով: Նրանց կարծիքով, եթե Ի. Ելաչիչը շուտ Վիեննա չհասներ, ապա «ապստամբությունը կարող էր շատ տարածվել» [«Եվրոպա», 05.12.1848, 202]:

Վենետիկի Մխիթարյաններից պատմաբան, բանասեր Ամբրոսիոս Գալֆայանի և Գրիգոր Գովրիկյանի ու Ղ. Հովնանյանի համոզմամբ 1848թ. դեկտեմբերի 2-ին Ֆերդինանդ I-ի «ազատ կամքով գահից Ֆրանց Իոսիֆին կայսր հռչակելուց հետո Ավստրիական կայսրությունում վիճակը փոխվեց [Գալֆայեան Ա., 1851, 225, Գովրիկեան, 1879, 278:]

Մխիթարյան պատմաբանների դիտարկումը ճիշտ է, քանի որ կայսերական կամարիլիայի իրականացրած պալատական հեղաշրջման արդյունքում կայսերական գահը ստանձնած 18-ամյա Ֆրանց Իոսիֆը հունգարական պետական ժողովի առաջ որևէ պարտավորվածություն չուներ: Կամարիլիան հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումներին վերջ տալու նպատակով ձեռնամուխ եղավ վճռական հարված հասցնելու ամենից առաջ հունգարացիների պայքարին: Այդ նպատակով ձգտելով իր կողմը գրավել Խորվաթիայի և Սլովենիայի ընդդիմադիր շրջաններին, կայսրը բավարարեց նրանց սաբորի ոչ էական մի քանի պահանջները: Նա արքունիքին մոտ կանգնած բարոն Ֆ. Կուլմերին նշանակեց անպորտֆել նախարար, իսկ Ի. Ելաչիչին՝ Ֆիումեի և Դալմաթիայի նահանգապետ: Դա գոհացրեց խորվաթական բուժական գործիչներին, որոնք երիտասարդ կայսրի այս նշանակումները դիտում էին որպես իրենց «ինքնավարության ձեռք բերման և հարավսլավոնական հողերի քաղաքական միավորման կարևոր նախապայման» [История Югославии, 1963ա, 437; Фрейдзон, 2001, 114, 118]:

«Եվրոպան» անդրադառնում է Ի. Ելաչիչի նշանակմանը, պատմում, որ նա մասնակցել է Ֆրանց Իոսիֆի գահին անցնելու արարողությանը, որից հետո Ֆերդինանդ I-ը երիտասարդ կայսրին անձամբ ներկայացրել է Ի. Ելաչիչին:

1849 թ. սկզբին Հունգարիայում տարած հաղթանակներն ու Պեշտի գրավումը ավստրիական արքունիքին հնարավորություն տվեցին հավատալ սեփական ուժերին և վերացնել հունգարներին

ու խորվաթներին արված զիջումները: Այս իրողությանն անդրադարձած Վիեննայի Մխիթարյանները գրում են, որ Ֆերդինանդ I-ը հունգարների հետ «չափե դուրս գթութեամբ վարվեց», նրանց պահանջները կատարեց, որ գուցե պետք չէր, և հիմա «հարկ է որ զենքով զսպուին ու շատ շնորքներն ալ ետ առնուին» [«Եվրոպա», 12.12. 1848, 205]:

Ավստրիական արքունիքն այդպես էլ վարվեց: 1849 թ. հունվարի 5-ին հունգարական կառավարությունը ավստրո-խորվաթական զորքերի հարձակման հետևանքով Պեշտը առանց կռվի լքեց ու տեղափոխվեց Դեբրեցեն:

1849 թ. մարտի 4-ին Ֆրանց Իոսիֆը կայսերական սահմանադրությունը Խորվաթիայում թշնամբար ընդունվեց: Այն ի հեճուկս Ի. Ելաչիչի հրամանի՝ խորվաթական թերթերը չտպագրեցին ընդհուպ մինչև 1849 թ. սեպտեմբերը: Սահմանադրությունը լուրջ հարված հասցրեց ազգային շարժմանը Խորվաթիայում, որը Սլովենիայի և Ռիեկայի հետ անջատվեց Հունգարիայից ու անմիջականորեն անցավ ավստրիական իշխանությունների կառավարման տակ:

Խորվաթական սաբորին թույլատրվեց բանակցություններ սկսել Դալմաթիայի հետ երկու նահանգների միավորման կապակցությամբ: Սահմանադրությունն ամրապնդեց Հաբսբուրգների գերիշխանությունը, կայսրությունը հռչակեց «միասնական ու անբաժան» և պահպանեց հարավսլավոնական հողերի մասնատվածությունը: Այն փաստացի հարավսլավոնական հողերին զրկում էր միավորվելու հնարավորությունից, ուստի Բանական վեչեն 1849 թ. օգոստոսի 4-ին հրաժարվեց հաստատել այն [История Югославии, 1963ա, 439-440; История южных и западных славян, 1969, 243; Фрейдзон, 2001, 118-119]:

«Եվրոպան» Խորվաթիայում կայսերական սահմանադրության հռչակման արձագանքներին չի անդրադառնում, բայց անուղղակիորեն շոշափում է այդ թեման: Թերթը բացահայտ ավստրիամետ դիրքերից գրում է, թե կայսերական սահմանադրությունը բոլոր ժողովուրդների շրջանում հավանություն է գտել, իսկ խորվաթների մի քանի խնդիրները կատարել է, որը նրանց «շատ ուրախացրել է և հիմա ավելի ևս կջանան տերությանը օգնելու և կայսեր համար պատերազմելու» [«Եվրոպա», 10.04.1849, 57]:

«Եվրոպան» չի պարզաբանում, թե խորվաթները ինչու՞ են ուրախացել, և կայսրը նրանց որ պահանջներն է բավարարել: Նկատելի է, որ «Եվրոպան» սահմանադրության հռչակումից հետո ավելի շատ տեղ է տալիս ավստրիական մամուլի լուրերին և անպայման նշում է իր լրատվության աղբյուրը: Մի բան, որ խորվաթների պայքարը լուսաբանելիս «Եվրոպան» շատ քիչ էր անում մինչև սահմանադրության ընդունումը:

Վիեննայի Մխիթարյանները ժխտում են այն կարծիքը, թե իրենք Ավստրիական կայսրությունում հեղափոխական և ազգային շարժումները լուսաբանում են ավստրամետ դիրքերից ու պաշտպանում են իշխանություններին: Նրանք «փուճ խոսք և դատարկ զրպարտություն» են անվանում իրենց ներկայացված հանդիմանությունը, թե «Ավստրիական կառավարութենէ վախենալով կամ արգելուելով և կամ տէութեան ծածկելովը՝ եղած յեղափոխութիւններուն, պատերազմներուն, կայսերական զօրաց յաղթուելուն և ուրիշ ասոնց նման դէպքերուն ստոյգ լուրը եղած չըլլանք դնել» [«Եվրոպա»,12.06.1849, 93]:

Նման լուրեր տարածողները, գրում է «Եվրոպան» պարզապես տեղյակ չեն, որ Վիեննայում տպագրության ազատություն է, ամեն տեսակ ազատ լրագրեր են լույս տեսնում, որոնք

«հրապարակաւ արձակ համարձակ» գրում են ավստրիական իշխանությունների թե հաջողությունների և թե ձախողումների մասին: Եթե իրենց ընթերցողները քիչ թվով լուրեր են կարդում ավստրիական իշխանությունների անհաջողությունների մասին, ապա պատճառը ոչ թե այն է, որ «Եվրոպայի» լրագրողները վախենում են նրանցից, այլ պարզապես «շինծու և խաբեական լուրերը արժանի չեն սեպած մեր յարգի ընթերցողաց առջևը ստոյգ դէպէի մը պէս դնել» [«Եվրոպա», 12.06.1849, 93]:

Սահմանադրության շնորհումից հետո հունգարա-խորվաթական զինված ընդհարումները պակասեցին: Հակամարտող կողմերն ավելի շատ զբաղված էին Վիեննայի արքունիքի և միմյանց հետ իրենց հետագա հարաբերությունները կարգավորելով: 1849 թ. հունիսի սկզբին Բելգրադում խորվաթա-հունգարական բանակցությունների արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն Ավստրիայի դեմ պատերազմում միմյանց օգնելու մասին, պայմանով, որ հունգարական կառավարությունը պիտի ճանաչի խորվաթների ազգային-քաղաքական ազատ զարգացման իրավունքը [История Югославии, 1963ա, 440; Фрейдзон, 2001, 119]: Բայց Հունգարիայի կառավարությունն այդ համաձայնությունից հրաժարվեց [История Венгрии, 1972բ, 171]:

Անդրադառնալով հունգարա-խորվաթական հետագա հակամարտությանը՝ «Եվրոպան» պատմում է 1849 թ. մայիսի 7-ին Ի. Ելաչիչի Ակրամ գնալու մասին, որտեղ զինվորները նրան «շատ հանդիսությամբ ընդունեցին և իրենց ազգային դյուցազնին համար իրիկունը քաղաքը լուսավորեցին» [«Եվրոպա», 15.05.1849, 77]:

«Եվրոպան» Ի. Ելաչիչի գործունեության մասին միշտ համակրանքով է պատմում 1849թ. գրեթե բոլոր լրատվություններում ու նրան «ազգային դյուցազն» համարում: Թերթը խորվաթների ազգային շարժումը լուսաբանելիս երբևէ Ի. Ելաչիչին չի քննադատում, ինչը շատ հաճախ է անում հունգարների ազգային պայքարի ղեկավարներից Լ. Կոշուտի հասցեին:

Դրանով «Եվրոպան» դրսևորում է կողմնակալ վերաբերմունք: Մինչդեռ այս երկու գործիչները պայքարում էին իրենց ժողովուրդների ազգային իրավունքների և ինքնավարության համար: Հունգարացիների պայքարն ուղղված էր Վիեննայի արքունիքի դեմ և նպատակ էր հետապնդում ստեղծել հունգարական ինքնուրույն պետություն, իսկ խորվաթների պայքարը հունգարացիների դեմ էր և ձգտում էր ինքնավարության՝ Ավստրիական կայսրության կազմում: Խորվաթիայի կուսակալ Ի. Ելաչիչը կայսրության դաշնակիցն էր հունգարացիների դեմ մղվող պատերազմում, իսկ հունգարացիների պաշտպանության կոմիտեի ղեկավար Լ. Կոշուտը պայքարում էր Ավստրիական կայսրության դեմ, իր հայրենիքի ազատության համար: Մխիթարյանները հունգարացիների ազգային պայքարը ճիշտ չեն գնահատում և չեն ընդունում նրա ազատագրական լինելը: «Եվրոպան» Լ. Կոշուտին հանդիմանում է, որ նա բոլոր միջոցները ի գործ է դնում, որպեսզի «Մաճառի թագին հետ միացած թագավորութեանց ազգերը մաճառացնել ու Մաճառմերուն համար ազատություն ձեռք ձգելու ատեն՝ զանոնք Մաճառի գերի ընել» [«Եվրոպա», 24.10.1848, 180]:

«Եվրոպան» Ի. Ելաչիչին համարում է ավստրիական բանակի գեներալ և տպագրում մայիսի 25-ի նրա զեկուցագիրը՝ ուղղված կայսերական բանակի ընդհանուր հրամանատարին: Նրանում Ի. Ելաչիչը պատմում էր Պետերվարադի շրջանում հունգարացիների հետ ունեցած իր ընդհարման մասին, ըստ որի՝ «թշնամին կորուստներ է տվել ու ամբողջովին ջախջախվել» [«Եվրոպա», 05.06.1849, 89]:

Ավստրիական պաշտոնական աղբյուրներից տպագրելով Ի. Ելաչիչի զեկուցագրերը՝ Վիեննայի Մխիթարյաններն ընդգծում են նրա ենթակայությունը կայսերական զորքերի հրամանատարությանը: Այդ բանը նկատելի է նաև Ի. Ելաչիչի զեկուցագրերի շարադրանքից, որոնցում նա գրում էր «մեր զորքերի» մասին՝ նկատի ունենալով խորվաթա-ավստրիական զորամիավորումները, իսկ «թշնամի» ասելով հասկանում էր հունգարացիներին:

Ի. Ելաչիչի զորքն ավստրիական բանակի մի մասը կազմելու մասին վկայում է նաև «Եվրոպայի» հաջորդ լրատվությունը, ըստ որի՝ խորվաթական կուսակալը «հարավային բանակով մեծ հաղթություններ կկատարե և շարունակ առաջ կքալե»: Թերթը հարավային բանակ ասելով նկատի ունի Ի. Ելաչիչի գլխավորած զորքը, որը գործում էր Հունգարիայի հարավում:

«Եվրոպայի» տեղեկությամբ՝ Ի. Ելաչիչը հաղթանակ տարավ հունգարական բանակի հրամանատար Մ. Պերցելի նկատմամբ, նրա առաջապահ զորագունդը «ցիրուցան արեց» և 1849 թ. հունիսի 12-ին առանց արգելքի մտավ Նայսաց: Քաղաքի բնակչության մեծամասնություն կազմող սերբերը հազիվ կարողացան քաղաքից դուրս փախչել, որի գրավումից հետո հունգարացիները Պետերվարադի բերդից գնդակոծեցին Նովի Սադը և 800 տուն այրեցին: «Եվրոպան» ընդգծում է Ի. Ելաչիչի բարեհոգությունը, որն «այս ողորմելիներին 20 հազար արծաթե դրամ տվեց՝ իրենց մեջ բաժանելու համար» [«Եվրոպա», 26.06. 1849, 103]:

Չանդրադառնալով մի քանի օր անց Վերբասի և Հեգյեշի շրջանում Ի. Ելաչիչի կրած պարտությանը և նահանջին՝ «Եվրոպան» գրում է, որ նա անառիկ պատնեշներ կառուցեց Դիդլ, Վիլլովո, Բերլաս և Մոշորին գյուղերի շրջանում և անցավ պաշտպանական կռիվների՝ սպասելով կայսերական բանակի օգնությանը: Հունգարացիները մի քանի անգամ հարձակվեցին այս ամրությունների վրա, բայց կորուստներ կրելով՝ նահանջեցին [«Եվրոպա», 07.08.1849, 133]:

«Եվրոպայի» և Ղևոնդ Հովնանյանի պատմելով՝ 1849թ. օգոստոսին Ի. Ելաչիչն իր զորքով հասավ Տեմեշվար ու միացավ գեներալ Յ. Հայնաուի գլխավորած ավստրիական զորքերին [«Եվրոպա», 28.08.1849, 146, Հովնանեան, 1860դ, 277]:

Այստեղ հունգարական բանակը ծանր պարտություն կրեց, որին հաջորդեցին Արադի և Մուկաչևոյի բերդերի անձնատվությունները: Սեպտեմբերի 6-ին անձնատուր եղավ Պետերվարադի բերդը, որի մասին պաշտոնական լուրը, ըստ «Եվրոպայիե, ավստրիական իշխանություններին հայտնել էր Ի. Ելաչիչը [«Եվրոպա», 11.09.1849, 153]:

Ավստրիական արքունիքի համար Ի. Ելաչիչը վաղուց ցանկալի մարդ էր, որին կայսրը հունգարացիների պայքարը ճնշելուց հետո շնորհ արեց և Վիեննա հրավիրեց Կ. Ռադեցկու և Յ. Հայնաուի հետ միասին: «Եվրոպան» պատմում է 1849 թ. սեպտեմբերի 23-ին Վիեննայում շքեղ զարդարված «լույսերի ծով դարձած» կայսերական պալատի մեծ սրահում նրանց պատվին կայացած «փառավոր ընդունելության» մասին, որոնց անձամբ տեսակցելու նպատակով Վիեննա էին եկել կայսրի ծնողները: Հանդիսության մասնակիցները խմեցին երեք գեներալների կենացը, միաձայն կեսցցե բացականչեցին, որոնց ձայնը խրախճանքի ընդարձակ սրահում այնպես կը թնդացներ որ հարիւրավոր երաժիշտներու նուագարաններուն ձայնը չէր լսուէր» [«Եվրոպա», 02.10.1848, 165]:

«Եվրոպան» ավստրիական պաշտոնական աղբյուրների և մամուլի լրատվությամբ պատմում է այս մասին, բայց ընդգծված ավստրիամետ չերևալու և անկողմնակալ լրագրի համբավը

պահպանելու համար նախընտրում է ներկայացնել Ի. Ելաչիչի մասին գովեստով պատմող անգլիական «Թայմս» թերթի Վիեննայի թղթակցի հոդվածը: Թղթակցի պատմելով կայսրը Կ. Ռադեցկուն շնորհակալություն հայտնեց ծառայության համար և խնդրեց միշտ իրեն խորհուրդներ տալ և օգնել: Կ. Ռադեցկի «դյոցազն ծերունին» պատասխանեց, որ ինքն անցած ժամանակի մարդ է, «ներկա և ապագա խնդիրներուն յարմարութիւն չունի», ուստի դա կարող է անել Ի. Ելաչիչ կուսակալը, որին կայսրը կարող է լիովին վստահել:

Այս խոսքերի վրա Ի. Ելաչիչը ներս մտավ սրահ և «իր գեղեցիկ ճարտարախոսությամբ իր վեհ մտածմունքը հայտնեց»: Նա խոսեց սահմանադրական ազատության մասին և նշեց, որ Ավստրիայի փրկությունը միայն «կայսերական խոստումները ճիշտ կատարման վրա կեցած է»: Նրա խոսքը ներկաները հաճույքով ունկնդրեցին, այդ թվում կայսրը, ով շեշտեց, որ Կ. Ռադեցկու և Ի. Ելաչիչի «տված խորհուրդը իր վրայ ինչ ազդեցութիւն ըրեր է» [«Եվրոպա», 09.10.1848, 169]:

Խորվաթական ազգային պայքարը գլխավորող կուսակալ Ի. Ելաչիչը Վիեննայի արքունիքում իսկապես ընդունված անձնավորություն էր: Կայսրը գնահատում էր նրա դերը հունգարացիների դեմ տարած հաղթանակում: Ի. Ելաչիչի նկատմամբ վստահության ու բարեհաճ վերաբերմունքի մասին է խոսում այն փաստը, որ պատերազմի ավարտից հետո Ֆրանց Իոսիֆը Ի. Ելաչիչին նշանակեց Խորվաթիայի, Սլովենիայի և Ռազմական զորքերի հրամանատար:

Հունգարական ազգային-ազատագրական պայքարի պարտությունից հետո խորվաթական ազգային ժողովը ճանաչեց ավստրիական կայերական կայսրի շնորհած սահմանադրությունը:

1850 թ. փետրվարի խորվաթական բանական վեչեն լուծարվեց ու կայսրի հրամանգրով Գործադիր իշխանությունը Խորվաթիայում և Սլովենիայում հանձնվեց կառավարությանը՝ կուսակալի գլխավորությամբ: Ընդառաջ գնալով Ի. Ելաչիչի բազմաթիվ խնդրանքներին՝ 1850 թ. ապրիլին Ֆրանց Իոսիֆը հաստատեց Խորվաթիայի, Սլովենիայի և Պրիմորյայի քաղաքական անկախությունը Հունգարիայից, թույլատրեց այս նահանգներում խորվաթերենը գործածել որպես պաշտոնական լեզու:

Եզրակացություն: Վիեննայի Մխիթարյանները լուսաբանելով պայքարի ամբողջ ընթացքը՝ իրավացիորեն նշում են, որ այն ուղղված է Հունգարական տիրապետության դեմ: Նրանք Խորվաթիայի կառավարիչ Ի. Ելաչիչին համարում են Ավստրիական կայսրությանը հավատարիմ մարդ, ով պայքարում է Հունգարական թագավորության կազմից դուրս գալու և Ավստրիական կայսրության կազմում Խորվաթիայի ինքնավարությանը հասնելու համար:

Գրականության ցանկ

Գալեմքյարեան Գ. 1893, Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, Մխիթարյան տպարան, 226 էջ:
Գալֆայեան Ա. 1851, Համառօտութիւն ժամանակակից պատմութեան, Վենետիկ, տպարան սբ. Ղազար, 237 էջ:
Գովրիկեան Գ. 1879, Ընդհանուր պատմութիւն համառօտ, Վիեննա, Մխիթարյան տպարան, 300 էջ:
Ինճիճյան Ղ. 1815, Ազգասէր, Վենետիկ, տպարան սբ. Ղազար, 226 էջ:
Կարինյան Ա. 1960, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 635 էջ :
Հովնանեան Հ. Ղևոնդ վ. 1860, Պատմութիւն քաղաքականութեան եւրոպական տէրութեանց ընդհանրապէս, հ Դ, Վիեննա, Մխիթարյան տպարան, 445 էջ:

«Արշալույս արարատյան», 1849, 24 հունիսի, № 340:

«Բազմավեպ», 1843, հատոր առաջին, էջ 3-4:

«Բազմավեպ», 1848, 1 մայիսի, № 9:

«Բազմավեպ», 1851, 15 մարտի, № 6:

«Եվրոպա», 1848, 7 մարտի, № 10; 9 մարտի, № 19; 28 մարտի, № 13; 4 ապրիլի, № 14; «Եվրոպա», 25 ապրիլի, № 17; 2 մայիսի, № 18; 16 մայիսի, № 20; 23 մայիսի, № 121; 30 մայիսի, №122; 20 հունիսի, № 25; 27 հունիսի, № 26; 25 հուլիսի, № 30; 19 սեպտեմբերի, № 38; 3 հոկտեմբերի, № 40; 9 հոկտեմբերի, № 41; 17 հոկտեմբերի, № 42; 7 նոյեմբերի, № 45; 5 դեկտեմբերի, № 49, 12 դեկտեմբերի, № 50:

«Եվրոպա», 1849, 15 մայիսի, № 20; 10 ապրիլի, № 15; 5 հունիսի, № 23; 12 հունիսի, № 24; 26 հունիսի, № 26; 7 օգոստոսի, № 32; 28 օգոստոսի, № 35; 11 սեպտեմբերի, № 37:

«Հայաստան», 1848, 5 հունիսի:

Авербух Р. А. 1965, Революция и национально освободительная борьба в Венгрии 1848-1849 гг. Москва, Наука, 406 с.

История XIX века 1938, т. 5. Под ред. Лависса и Рамбо, Москва, Государственное социально-экономическое издание, 411 с.

История Венгрии 1972, том II. Под ред. М. Исламова, Москва, Наука, 607 с.

История Югославии 1963, т.1. Ред. кол. Ю.В.Бромлей и др. Москва, Издательство АН СССР, 736 с.

История южных и западных славян (1969), Ред. кол. И. М. Белявская и другие., Москва, Изд-во Московского университета, 536 с.

Освободительние движения народов Австрийской империи. Возникновение и развитие. Конец XVIII в. 1849 г. 1980, Ред. кол. В. А. Дьяконов и другие, Москва, Наука, 610 с.

Пристер Е. 1952, Краткая история Австрии, Москва, Издательство иностранной литературы, 736 с.

Фрейдзон В. И. 2001, История Хорватии. Краткий очерк с древнейших времен до образования республики (1991 г.), Санкт-Петербург, Алетейя, 318 с.